Դաս 30. Էպոսի ճյուղերը: Սանասար և Բաղդասար

Իրիկուն որ փի դառնար, փուն գար
Ծովինար ասաց աղջիկներուն.
— Աղջիկներ, դուք քելեք, գնացեք,
Ձեզ համար ման էկեք, քեֆ արեք,
Ես էրթամ, քիչ ջուր խմեմ:
Մրաածելով ծովու բերան վե գնաց.
Գնաց, կայնեց մեկ քարափ տեղ.
Նայեց, տեսավ, որ ծովին ծեր չկա:
Ինք ու քեռմեր ծովու պռուկ նստան, լացին:
Շատ նեղացավ աղջիկն ման գալով,
Էնոր խըդամ շատ ծարվեցավ,
Ինքն էլ շատ ծարվեցավ, ասաց.
— Էս ծովի ջուր շատ աղի է:
Ամ, երանի՛ մեկ կաթ ջուր ըլներ,
Ես խմեի, սրտիս սպասակն անցներ:
Քեռմերըն շատ ֆըռաց, ջուր չգտավ,
Էն ժամանակ Ծովինար ասաց.

— Աստված, դու մեկ աղբուր էստեղ բուսցես,
Մեկ էլ ինձի մեկ լուս ու ճար անես:
Աստուծու հրամանով ծովըն բացվավ,
Մի շատ համեղ ջուր դուրս էկավ:
Նայեց, տեսավ՝ մեկ ջոջ քար կա ծովու պռուկ,
Սիպտակ աղբուր մի էդ քարից կը թալի.
Ջուրն էլ էդ քարի չորս բոլոր բռներ էր.
Մարդ չէր կարնա առանց հալավ հանելու,
Էդ աղբուր էրթա, որ ջուր խմի:
Ինքն իր շորեր էհան, գնաց էդ աղբուր,
Բուռ էտու էդ անմահական աղբըրի մեջ,
Մի բուռ լիք ջուր խմեց,
Մեկ էլ՝ մի բուռ կիսատ:
Աղբուրըն ցամաքավ:
Էդ էրկու բուռ ջրից հղացավ: